

**ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀԱՅԲԵՆՆԵՐՈՒՄ**

ԽԱՉԱՏԲՅԱՆ Գ. Կ.

Լիարժեք հաղորդումը սովորաբար պայմանավորված է նախադասության հիմնական բաղադրիչներով՝ ենթակայով և ստորոգյալով: Սակայն խոսքի շղթայում լիարժեք հաղորդակցում կարող է տեղի ունենալ նաև թերի նախադասությունների միջոցով: Վերջիններիս հիմնական բաղադրիչներից մեկը կամ երկուսն էլ՝ արտահայտության պլանում լրիվ կամ մասամբ բացակայում են, որից, սակայն, նախադասության բովանդակության պլանը չի խաթարվում, քանի որ բացակայող անդամը կամ անդամները տվյալ հաղորդման մեջ ենթադրվում են, և հարկ եղած դեպքում դրանք կարելի է վերականգնել, այն է՝ դրանց բառային-քերականական տեսք տալ: Այսպես՝ հայրեններից քաղված հետևյալ տողերը (ընդգծվում են) կառուցված են երկկազմ նախադասություններով, որոնց մեջ կան նաև թերի կառույցներ (առաջին նախադասության մեջ զեղչված է պարզ ստորոգյալի օժանդակ բայը, չորրորդի մեջ՝ ենթական): Թերի նախադասությունների գործածումով խոսքի հեղինակը խուսափում է խոսակցին արդեն իսկ հասկանալի միտքը «ավելորդ» բառերով կամ, ինչպես Գ. Ջահուկյանն է դրանք անվանում, «ձևական»² անդամներով ծանրաբեռնելուց.

Ո՛վ տեսեր ամառըն ձիւն,

Որ կու գայ ի վերայ մարդուն (64)³:

Կուրնա՛ չարկամնուն աչերն,

Կու պահեն զիս քենէ օտար (223):

Թե՛ լիարժեք և թե՛ թերի երկկազմ նախադասություններին հակադրվում են միակազմ նախադասությունները, որոնցով, ճիշտ է, նույնպես տեղի է ունենում հաղորդակցում, սակայն կառուցվածքային և բովանդակային պլանների էական տարբերությամբ⁴.

¹ Անշուշտ, անհրաժեշտության դեպքում կարելի է զեղչել նաև նախադասության երկրորդական անդամ(ներ)ը:

² Տե՛ս Գահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 391:

³ Այս և հետագա շարադրանքում բերվող լեզվական նյութը քաղել ենք Ա. Մնացականյանի «Հայրեններ» (Ե., 1986) աշխատությունից՝ փակագծերում նշելով համապատասխան էջերը:

⁴ Որոշ նախադասություններ միջակա դիրք են գրավում երկկազմ և միակազմ կառույցների միջև.

Գէմ չէմ Յուդայի ծնած

Կամ իմ հօրն ու մօրն անիծած:

Ես ալ աղկեկան բերած (հմմտ. Ես եմ աղէկի բերած -73),

Ու հազար նազով սնուցած (52):

Լուսըն գայ, բարին բերէ,

Որ ամէն չարըն դիրանայ (99):

Ով զիս կտրատէ, մորթէ,

Եկան ու ասին ինձի,
Թէ՛ Եարիտ պաղչան կայ գօհար (54-55):
Այսօր ընդ իս մի խօսիք,
Խոց ունիմ, որ ինձ հերիք է (63):
Թէ շունչս ու հոգիս կասես՝
Նա եկաւ, կլափս կուտեցաւ (76):

Հաւուկն որ նստած տեսնուս,
Մի՛ ձգեր զձեռն քո ի քար:
Մի՛ խրտահարէր զատ հաւտ,
Թ՛ ինչ՝ հազար որ հաւն է օտար (87):
Թէ չուզես, որ քուֆր ասես,
Ձեռքըդ տար ու սիրտըդ բռնէ (222):

Անդրադառնանք հայրեններում տեղ գտած միակազմ նախադասություններին և նրանց ոճական առանձնահատկություններին:

Միակազմ նախադասությունները բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին, որտեղից էլ թափանցում են նաև գրական լեզվի ոլորտ՝ գործածվելով գեղարվեստական ստեղծագործությունների մեջ: Որքան որևէ ստեղծագործության ակունքները մոտ են ժողովրդախոսակցական լեզվին, այնքան այդպիսի գործերում հաճախադեպ են միակազմ նախադասությունները: Այս շարքում բացառություն չեն նաև հայրենները, որոնք, ինչպես գիտենք, գերազանցապես ժողովրդական ստեղծագործություններ են, ուստի և պատահական չէ դրանցում միակազմ նախադասությունների նկատելի առատությունը:

Քո ծիծտ է առաւօտ նման,
Քանի յետ բանամ՝ լուսանայ (101):
Հասա, չհասա եարիս,
Վա՛յ հազար մօրքս բերելուն (71):
Աշխարհս այլ ամ ի՛նչ ողորմ,
Երբ հարուստն տառպելանայ (106):

Բարև քեզ հարիւր հազար
Ի ըռէհան և մուշկի ամպէր (61):
Հազար ամանաթ, հոգի՛,
Յետև ինձ ըզսէրըն թարկէ (235):
Գամ կռուիմ, հինչուկ լուսանայ (99):

Հայտնի է, որ միակազմ նախադասությունները միատարր չեն. առանձնանում են բայական միակազմ, անվանական միակազմ և բառ-նախադասություններ⁵, որոնք հայրեններում տեղ են գտել ոչ միևնույն հաճախականությամբ:

Դիտարկումը ցույց է տալիս, որ առավել հաճախադեպ են բայական, իսկ վերջիններիս շարքում՝ դիմավոր միակազմ նախադասությունները (խոսքը անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ կառույցների մասին է), որոնք տարբեր հայրեններում կիրառվել են իբրև ոճական տարբեր հնարանքների արտահայտման միջոց: Հայրեններում նշված տիպի դիմավոր միակազմ նախադասությունների հաճախադեպությունը միանգամայն օրինաչափ է: Բանն այն է՝ հայրեններում չափազանց մեծ թիվ են կազմում մարդկային ամենատարբեր հարաբերություններ նկարագրող նախադասությունները, որոնց միջոցով արտահայտված

Քարկոծէ՛ իմ կէս հախն չէ (114):
Ճերմակ ծոցդ ոսկի փողնոց,
Քո սիրուտ եմ հերատաթ ու խոց (257):
Պահեմ սահուն և՛ երէր ուն,
Մինչոր գայ լուսն առաւօտուն (228):

⁵ Տե՛ս Խաչատրյան Գ., Գրաբարի միակազմ նախադասությունները, Ե., 2002:

գործողությունները գերազանցապես վերագրվում են մեկ կամ մի քանի անձանց կամ էլ բոլորին: Նմանատիպ նախադասությունների հաճախակի գործածությունը պատճառաբանվում է մեկ հանգամանքով նս. խոսքի հեղինակը ոչ միշտ է պատրաստ որոշակիորեն նշել գործողություն կատարողի ով լինելը: Հենց նշված նկատառումով էլ նա դիմում է հատկապես բայական միակազմ նախադասությունների օգնությանը: Օրինակ՝

Թէ չէ կու մեռնիմ գնամ,
Գան ասեն քեզ՝ Մարդայսպան (172):
Վախեմ, թէ անէրէց մեռնիմ,
Ու տանին թաղեն անօրէն (378):

Հատկանշական է, որ հայրեններում անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ ավելի հաճախ կիրառվում են այն ժամանակ, երբ խոսքի հեղինակը նույնիսկ գիտենալու դեպքում կամենում է չկարևորել կամ խուսափում է նշելուց նախադասության քերականական ենթական, դրանով իսկ նաև՝ նկարագրած գործողության իրական կատարողին: Ահավասիկ՝

Եկին ու խապար բերին՝
Կաֆայու քարերն է ճոհար (67):

Նմանատիպ նախադասությունների մեջ որպես գործողություն կատարող կարող է ենթադրվել մեկ անձ, իսկ որոշ դեպքերում՝ մեկից ավելի անձինք⁶: Այսպես՝ հետևյալ տողերում գործողությունը սովորաբար կատարվում է մեկի կողմից.

Շիշէ մի հալած ոսկիդ
Ի գետինն ի վայր թափեցին (62):
Կտրեն զայն հաւուն շլնին,
Որ պէվախտ ատեն խօսեցաւ (77):

Հետագա տողերում գործողությունը ենթադրաբար կարող է կատարվել թե՛ մեկի և թե՛ մի քանիսի կողմից.

Եկին ու խապար բերին,
Թէ քո եարն եղեր հաբեղա (131):
Հանցեղ որ բաժնեն զգառն
Ի մօրէն, որ դառնայ վայէ (135):
Թէ չէ կը սպանեմ ես զիս,
Գան՝ ուզեն զարիւնս ի քենէ (235):

Կան անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ, որոնցում նկարագրված գործողությունը կատարվել է մեկ անգամ: Այս դեպքում սովորաբար գործածվում են դիմավոր բայի անցյալ կատարյալով արտահայտված ժամանակաձևեր.

Առին, ի հէքիմ տարան,
Նա ասաց, թէ՛ Ապրելու չէ (64):
Զիմ եարն յիսնէ զատեցին,
Թառմեցայ զէտ վարդի տերև.

⁶ Անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունների բովանդակության պլանում իրանիշ և կենդանանիշ գոյական ենթականեր սովորաբար չեն ենթադրվում:

Տարին յայլ երկիր հանին,

Չի ցաթեց իմ սիրտն այլ արև (108):

Իսկ հետևյալ անորոշ-դիմավոր նախադասությունների բովանդակության պլանից ենթադրվում է, որ նկարագրվող գործողությունը կատարվել է մեկից ավելի անգամ.

Կուգան ու կուտան հագար,

Չե՛մ առնուր և զքեզ չե՛մ ի տար (55):

Շուտով դեղ ու ճար արեք,

Որ չասեն, թե՛ «Անկի մեռաւ» (76)⁷:

Հետաքրքիր է, որ թեև ընդգծված երկու նախադասությունների արտահայտության պլանում նշված գործողությունների կատարման հաճախականության մասին բառաբերականական որևէ միջոց չի գործածվել [այդպիսի միջոց է, օրինակ, հետևյալ միակազմ նախադասության ընդգծված անդամը. Տարպա մի («մի անգամ» - Խ. Գ.) սիրու վերա Ծեծեցին՝ կողերս երևաց (233)], սակայն նրանց բովանդակության պլանից ենթադրվում է, որ այդ գործողությունները կատարվել են մեկից ավելի անգամ: Այս բանին, անշուշտ, նպաստում է կուգան, կուտան բայաձևերի քերականական բազմիմաստությունը. խոսելու պահին կատարվող գործողությունից բացի՝ դրանք ցույց են տալիս նաև շարունակական գործողություն: Հմմտ. նաև՝

Երէկ ցորեկով բարով

Տանէին (մեկ անգամ - Խ.Գ.) մէկ եար մի ճորով (45) և՝

Երբ որ ես պգտիկ էի,

Կանչէին (բազմաթիվ անգամ - Խ. Գ.) ինձ՝ «Ոսկի տղայ» (82):

Նշված բոլոր դեպքերում հայրեններում կիրառվում է ընդամենը քերականական մի հնարանք. ստորոգյալներն արտահայտվում են հոգնակի թվի 3-րդ դեմքի այնպիսի բայաձևով, որով փաստորեն կարելի է արտահայտել թե՛ մեկ կամ մեկից ավելի անգամ, թե՛ մեկ կամ մի քանի անձի կողմից կատարվող կամ կատարված գործողության գաղափար՝ առանց համապատասխան անդամի (ենթակա, պարագա և այլն) բառային-քերականական արտահայտության:

Նկատելի է, որ հայրեններում ավելի հաճախադեպ են այն անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամն արտահայտված է ասացական (հիմնականում՝ ասել) բայով, ինչպես՝

Եկին ու խապար բերին՝

⁷ Հայրեններում միշտ չէ, որ անորոշ կերպով կատարվելիք գործողությունը ձևավորվում է անորոշ-դիմավոր կամ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների տեսքով. հաճախ անորոշ գործողության ենթակայի դերում հանդես են գալիս անորոշ անձեր նշող ալամ, ամէն, ամէնքն, խալիս, այլև մարդ, գոյականներն ու դերանունները՝ ձևավորելով երկկազմ նախադասություններ.

Ջքո դիմայթըն մարդ չգիտէ (224):

(հմմտ. Սայաթ-Նովայի «Յիս քո դիմեթն չիմ գիդի....» տողը):

Բնձի այն մուհալ կու գայ

Քոյ ծոցուտ այլ մարդ տիրանայ (225):

Ալամն գիմ միսըս կուտեն,

Ես զքո թարկըն չեմ ի տար (132):

Ի՛նչ կուգեն այս խալիսս ի մենէ (135) և այլն:

«Քո սիրած մորձն զքեզ մոռցաւ» (76):

Կասեն, քո ծոցէդ ի վար

Գետ էլեր, անուշ կու բղխէ (86) և այլն:

Անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ գործածելով՝ հայրեններում սովորաբար նկարագրվում է խոսքային մի որոշակի իրադրություն, որտեղ կարելի է ենթադրել մեկ կամ մի քանի անձ: Միննույն բանը չենք կարող ասել ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների մասին. դրանք գործածվում են խոսքային որոշակի իրադրություն բացառող պայմանների համար, հետևաբար որպէս գործողություն կատարող կարող են ենթադրվել բոլորը: Այլ կերպ ասած՝ ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասությունների մեջ խոսքի հեղինակը դիմում է ընդհանրապէս բոլորին.

Քանի ու քանի՝ ասեմ՝

Վարդ մի՛ սիրեր, փուշ ունի.

Գնա՛, մանուշակ սիրէ,

Փուշ չունի, անուշ հօտ ունի (122):

Ավելի հաճախ այս կառույցների միջոցով արտահայտվում են սովորութային, ընդհանրական, բոլորին վերագրելի խորհուրդներ, խրատներ, առաջարկություններ՝ արտահայտված դիմավոր բայի՝

ա) եզակի 2-րդ դեմքով.

Զինչ շաբթուն որ մեղք գործես՝

Կիրակի գայն խոստովանէ:

Առնուս անթառամ պըսակ,

Յանտենին հուրդ ըզքեզ չը երէ (222):

բ) Հոգնակի 2-րդ դեմքով.

Այսօր ի յիս մի՛ խոսիք,

Խոց ունիս, որ ինձ հերիք է (272):

Եկէ՛ք, զհարամիս տեսէք,

Հարամիս, որ նետ մի չունի (104):

գ) Հոգնակի 3-րդ դեմքով.

Երբ ձուկն ի ջրէն գատի,

Այլվի ջուր ձգեն՝ նայ ապրի (45):

Որոշ հայրեններում վերոհիշյալ ընդհանրացումները կարող են կատարվել միաժամանակ 2-րդ և 3-րդ դեմքերով արտահայտված միադիմի կառույցների գուգորդմամբ, որով ավելի են ընդգծվում տվյալ ստեղծագործության ժողովրդական ակունքները.

Զհոգիդ սիրու գին ուզեն՝

Հա՛ն ու տու՛ր հազար զենեհան (87):

Շուտով դեղ ու ճար արէք,

Որ չասեն, թէ՛ «Անկի մեռաւ» (224):

Անկասկած, կառուցվածքային տեսանկյունից հետաքրքրական են այն տողերը, որոնցում խոսքի հեղինակները փորձել են զուգորդել անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր միակազմ նախադասություններ.

Տարպա մի սիրու վերա Կապեցին, հետըն չերևաց.
Ծեծեցին՝ կողերս երևաց. Առէք զիս յիմ եարն տարէք,
Դարձան ապուրշումէ թելով Թէ հազար կողերս է լոսած (233-234):

Երբեմն ընդհանրական-դիմավոր նախադասությունների մեջ որպես 2-րդ դեմքով արտահայտված գործողություն կատարող կարող է ենթադրվել նաև խոսողն ինքը.

Դաւիթ մարգարէ, ի մ'յոյս, Հնցկուն աղուորիկ եարուկ,
Շատ մեղկունք ունիմ՝ թէ թողուս. Թէ ի խուցըդ գայ՝ նայ թողուս.
Եարուկ մի սիրեր եմ ես, Յորեկն սաղմոս ասես,
Պարապար հետ երկու լուսոյս, Լօք գիշերն ի ծոցիկտ առնուս (59):

Ընդհանրական-դիմավոր նախադասությունների մեծագույն մասը հայրեններում ունի հրամայական հնչերանգ, սակայն դրանցից ոչ բոլորի մեջ են արտահայտվում կտրուկ հրամաններ: Ավելի հաճախադեպ են հորդոր, խորհուրդ, խնդրանք արտահայտող հրամայականներով նախադասությունները.

Քանի՛ ու քանի՛ ասեմ,
Թէ՛ Մեռայ, տարէք, թաղեցէք,
Իմ եարին դռնովն անցնէք,
Ու պահիկ մ' հոն արգիլեցէք....(64):

2-րդ դեմքով արտահայտված մի շարք ընդհանրական-դիմավոր նախադասությունների մեջ արտահայտվում են բոլորին ուղղված դիմումներ, կոչեր, որոնց միջոցով հեղինակը փորձում է բոլորին մասնակից դարձնել իրեն վերաբերող գործողություններին: Գեղարվեստական այս հնարանքով նույնիսկ ամբողջական հայրեններ են հորինվել: Ահավասիկ նրանցից մեկը, որը, հիրավի, պատկերավոր խոսքի արժեքավոր նմուշ է.

Քանի՛ ու քանի՛ ասեմ.
- Ջիմ եարին կապան կարեցէք.
Արևն իւր երեսք արէք,
Ջլուսընկան աստառ ձևեցէք.
Թուխ ամպն այլ բամբակ արէք
Ի ի ծովէն դերձան քաշեցէք.
Աստղերն այլ կոճակ արէք,
Ջիս ի ներս ողկիկ շարեցէք (268):

Նմանատիպ նախադասությունների միջոցով հայրենների հեղինակները մի տեսակ ազատ դաշտ են բացում նաև ընթերցողի՝ որպես տվյալ գործողության մասնակցի համար Կան ընդհանրական-դիմավոր նախադասություններ էլ, որոնցում գործողությունը կատարողներից միայն խոսքի հեղինակն է հայտնի.

Արի՛ք, ի ծովափն իջնումք Եկէ՛ք, որ իջնումք պաղչան,
Ու ձրկներ որսամք վարըմով. Լուք խմենք հետ պլպուլներուն (250):

Առնումք և ի տուն տանիմք,

Լուք եփեմք զհնք բարկ կրքակով (226):

Անորոշ-դիմավոր և ընդհանրական-դիմավոր նախադասությունների՝ ժողովրդական խոսքում տարածված լինելու օգտին է խոսում նաև այն փաստը, որ տասնյակ հայրեններ սկսվում են հենց նմանատիպ նախադասություններով: Դրանցից ամենատարածվածները «Մտիկ....արեք....» և «Եկին ու....» սկզբնատողերով հայրեններն են, որոնք շարունակության մեջ ունեն այլ բովանդակություն: Հմմտ.

Մտիկ մանուշկի՛ն արեք, Եկին ու խապար բերին,

Որ բուսեր ի հետ թփերուն (250): Թէ քո եարն եղաւ յարեղայ (249):

Մտիկ իմ եարին արեք, Եկին ու ասին ընծի,

Որ նուշ ու շաքար կու ծախէ (59)*: Թէ՛ եարիդ պաղչան կայ կօհար (241):

Մըտի կ' ցորենին արեք,

Որ ի մէջն ի վար կիսած է (236):

Հայրեններում հաճախակի հանդիպում են նաև բայական միադիմի միակազմ նախադասություններ, որոնք լինում են անկախ կամ գուգորդվող⁹ և գործածվում են ամենատարբեր նպատակներով:

Անկախ միադիմի միակազմ նախադասությունների մի մասը օդերևութանիշ է և սովորաբար հանդիպում է այն հայրեններում, որոնցում տեղ են գտել բնության նկարագրություններ. դրանք հիմնականում գործածվում են օրվա կամ տարվա ինչ-որ ժամանակահատված նշելու համար: Առաջին դեպքում այսպիսի կառույցներ ձևավորվում են առաւօտանայ, լուսանայ, մթանայ «դիմաստահմանափակ»¹⁰ բայերի միադիմի, այն է՝ եզակի 3-րդ, ժամանակաձևերով.

Քեզի գիրկ ու ծոց պարտիմ,

Պագ հագար, ինչոր լուսանայ (43)¹¹:

Քո ծիծտ է առաւօտ նման,

Քանի հետ բանամ՝ լուսանայ (101):

Երբոր առաւօտանայր՝

Ես ի բունս ճովոյի (240):

Երկրորդ դեպքում գերադաս անդամներն արտահայտվում են տարվա եղանակ նշող որևէ գոյականի և էական բայերից որևէ մեկի միադիմի ձևի հարադրումով.

Աշունք էր, եղև գարուն (250):

⁸ Հմմտ. Հայեց ի ծառին վերայ,

Թէ քանի հունար կայ ի նայ (262):

⁹ Անկախ և գուգորդվող միակազմ նախադասությունների մասին տե՛ս Խաչատրյան Գ., նշվ. աշխ., էջ 20-22):

¹⁰ Եզրը Գ. Զահուկյանին է (տե՛ս Զահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 468):

¹¹ Հմմտ. Հանչաք գիրկ ու ծոց անենք,

Պագ հագար մինչոր լուսանայ (248):

Օդերնութանիշ որոշ կառույցներում քերականական ենթական բառային արտահայտություն ունի. այն կա՛մ տվյալ ստորոգյալին համարմատ գոյականն է, կա՛մ այդ ստորոգյալը կազմող հիմնական ձևային հականիշ բառը, կա՛մ էլ օր(իկ) գոյականը.

Ոնց որ մութն մութանայր՝ Ելա, յայս քաղաքս եկա,
Ցածնայի, ծոցտ մտնուի. Լօք եղաւ օրիկս երիկուն (234):
Ոնց որ լուսն լուսանայր՝ Բնջօր այս մութըն լուսանայ (44):
Բարձրանայի, բունս մտնուի (46):

Արտահայտության պլանում միադիմի, իսկ բովանդակության պլանում անդեմ միակազմ մի շարք կառույցների միջոցով հայրեններում կատարվում են ընդհանրացումներ՝ գործողությունը վերագրելով բոլորին.

Սէրն որ դրամով լինի,
Ջինք երել պիտի կրակով (45):
Յում որ պիտի շատ ապրի,
Թող խելօք կենայ, թէ պիտի (272):

Վերջին տիպի միակազմ նախադասությունները միատարր չեն. արտահայտվում են՝
ա) դեռ գրաբարից ավանդված «միադիմի բայաձև+անորոշ դերբայ» կաղապարով.

Այտոր ի նչ խաճնել պիտի,
Ջայտ ի յիմ կրակն է այրած (261):
Հետ այս ժամանկու մարդուն
Աղ ու հաց ուտել չի պիտի (68):

Նկատենք, որ հայրեններում «միադիմի բայաձև+անորոշ դերբայ» կաղապարի առաջին բաղադրիչի դերով հանդես է գալիս պիտի բայաձևը, որը կորցրել է իր միադիմության նշանակությունը՝ ձեռք բերելով գործողության եղանակավորիչի գործառույթ.

Չարին համբերել պիտի (49):
Ջինքն երել պիտի կրակով (45):
Ատոր երել ի նչ պիտի,
Բեր դնեմ երեստ երեսիս (46):

Այս կարգի միակազմ նախադասությունների միջոցով արտահայտվում են խորհուրդներ, առաջարկություններ, ցանկություններ, որոնք միաժամանակ վերաբերում են թե՛ հանուրին և թե՛ հենց իրեն՝ խոսքի հեղինակին.

Չարին համբերել պիտի,
Բնջոր գայ բարին հասանի (49):
Միրել պիտի գայն աղուորն,
Որ դնչիկն է կարագ ու եղ (56) և այլն:

բ) «Հարակատար դերբայ+եմ օժանդակ բայի միադիմի տարբերակ» կաղապարով.

Այսօր ընդ իս մի՛ խօսիք,
Խոց ունիմ, որ ինձ հերիք է.
Ջարկած է չարխի նետով (= զարկել են - Խ. Գ.),
Որ սլաքն կէս նուկի է (63):

Ձնա ճորով է տարած (= տարել են - Խ. Գ.),

Կամ խաբած է (= խաբել են - Խ. Գ.) զինք դրամով (45):

Ի տարբերություն անկախ միադիմի միակազմ նախադասությունների, որոնք խոսքի մեջ կարող են հանդես գալ իբրև ինքնուրույն հաղորդակցական միավորներ, գուգորդվող միադիմի միակազմ նախադասությունները պարտադիր հանդես են գալիս որպես բարդ ստորադասական կառույցի գերադաս եզր և պահանջում են ենթակայի շարահյուսական գործառույթ կատարող երկրորդական նախադասություն¹²: Հմմտ. հետևյալ անկախ և գուգորդվող միակազմ նախադասությունները.

Գիշերն, ինչուր լուսանայր¹³

Քու սիրուն ես քուն չինլայի (160),

Աշունն էր, եղև գարուն (271) և՝

Յե՛րբ տի լի՝ սիրուտ տիրանամ (233):

Բնույթով գուգորդվող միադիմի կառույցների մեջ երբեմն արտահայտություն է գտնում տրականով խնդիր, որը փաստորեն տվյալ կառույցի տրամաբանական ենթական է: Նմանատիպ կառույցների գործածումով հեղինակը խուսափում է երկկազմ նախադասությունների անընդմեջ շարքից՝ դրանով խոսքին հաղորդելով թարմ շունչ.

Հանց անուշ լեզու ունիս,

Ինձ թուի՝ ձօհար կու թափես (86):

Ինձ դժար ու զերայ կու գայ՝

Քո ծոցուտ այլ մարդ տիրանայ (250):

Երբեմն էլ կառույցներ են ձևավորվում առանց տրականով անդամի. այս դեպքում արտահայտված գործողությունը միարժեքորեն վերագրվում է երկրորդական նախադասությամբ արտահայտված ենթակային.

Յու՛ր էր, որ սիրեցաք զիրար (110):

Լինի, թէ ալվի դառնաս

Ու կենաս խելացդ ի վերայ (219):

Հարկ է նկատել, որ անկախ միադիմի միակազմ նախադասությունների հետ համեմատած՝ գուգորդվող միադիմի միակազմ նախադասությունները հայրեններում հազվադեպ են:

Հայրեններում տեղ են գտել նաև բայական անդամ միակազմ կառույցներ, որոնք աչքի են ընկնում բացառիկ կիրառությամբ: Ընդ որում, վերջիններիս անդամ լինելը չի խոչընդոտում, որ դրանց միջոցով նույնպես տարբեր դիմային վերագրումներ կատարվեն¹⁴: Նշենք, սակայն,

¹² Տե՛ս Խաչատրյան Գ., նշվ. աշխ., էջ 21:

¹³ Բնագրում գիշերն բառից հետո տրոհում չկա: Հմմտ.

Իրիկունն, երբ որ մթնէր՝

Գայի, քո ծոցդ մտնէի (240):

¹⁴ Գրաբար և աշխարհաբար լեզվական աղբյուրներում հանդիպում են բազմաթիվ անդամ միակազմ նախադասություններ, որոնցից յուրաքանչյուրում արտահայտված գործողությունը ենթադրաբար վերագրվում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ դեմքին: Այս մասին առավել հանգամանալից տե՛ս Խաչատրյան Գ., Դիմային հարաբերության արտահայտությունը բայական անդամ նախադասությունների մեջ (Պատմա-բանասիրական հանդես, 1990, N 4, էջ 143-153):

որ հայրեններում մեզ հանդիպած մեկ-երկու նախադասությունների մեջ գործողությունը վերագրվում է հանուրին.

Այն մանկանն մի՛ նենգել,
Որ սրտով զքեզ կու սիրէ (134):

Բնական է, որ այս կարգի անդեմ միակազմ նախադասությունները բովանդակության պլանում ընդհանրական-դիմավոր միակազմ կառույցների հետ շարահյուսական համանիշներ են¹⁵:

Ինչպես մյուս միակազմ կառույցները, անվանականները նույնպես կարճառոտ խոսքի դրսևորման միջոց են ծառայում. կիրառելով անվանական միակազմ նախադասություններ՝ հեղինակը խուսափում է մտքերի արտահայտման՝ ոճական հորանջ առաջ բերող միօրինակ ձևերից: Ստորոգման ակտն այս դեպքում կայանում է ոչ թե բառային-քերականական միջոցների շնորհիվ, այլ հնչերանգի՝ տալով սովորականից տարբեր հաղորդակցման միավորներ.

Գիշերս ես ի դուրս ելայ,
Շատ աստղունք ու բարկ լուսնկայ (85):
Նալաթն յաչերուդ վերայ,
Զիմ թարկիկն է՞ր տուիր շուտով (117) և այլն:

Ոչ չեզոք հնչերանգն այս նախադասությունների ամենաէական հատկանիշներից է, և պատահական չէ, որ անվանական միակազմ նախադասություններից շատերը կիրառվում են՝ ապահովելու համար խոսքի հուզական կողմը.

Դարձաւ ու ճուղապ ետուր,
Թէ՛ «Քանի՛ քո չարն ու քանի՛» (79):
Խօ՛շ եար, քեզ լալով սէլամ (90) և այլն¹⁶:

Անվանական միակազմ նախադասությունների միջոցով հայրենների հեղինակները սովորաբար ներկայացնում են որևէ առարկայի առկայությունը առանց բայ-ստորոգյալի. այս ձևով նկարագրվող պատկերն ավելի տպավորիչ է դառնում.

Գիշերս ես ի դուրս ելայ,	Ես ալ ի դէմիկն ելայ,
Մութ գիշեր, չքկայ լուսունկայ (249):	Նեղ սոխախ ու խիստ խալապայ (43):
Գիշերս ես ի դուրս ելայ,	Գիշերս ես ի դուրս ելայ,
Ղարայկօզ ու բարկ լուսունկայ (248):	Մանր ու մեծ թաթաւն ի վերայ (44):

¹⁵ Հմմտ. Այն մանկանն մի՛ նենգիր,
Որ սրտով զքեզ կու սիրէ:

¹⁶ Առանձնանում են կոչականի դերով հանդես եկող մի շարք կառույցներ, որոնք, կարծում ենք, ժամանակին եղել են միակազմ նախադասության ուրույն տեսակ, որտեղ հնչերանգի միջոցով իրականացվել է 2-րդ դիմային ստորոգման քերականական ակտ.

Աղւոր մի գնալ տեսայ,
Կանչեցի, թէ՛ Կարմիր երես (51):
Շատ ձագերու մէջ յինիս
Ու կանչես՝ Արծի ւ, զենեհար (67):
Երբ որ ես պզտիկ էի,
Կանչէին ինձ՝ «Ոսկի տղայ» (82):

Հայրեններում անվանական միակազմ նախադասությունները լավագույն միջոց են անեծք, օրհնանք, ողջույն, երդում (և այլն) և ամենատարբեր ապրումներ արտահայտելու համար. փաստ, որը նույնպես վկայում է հայրենների, այլն դրանցում տեղ գտած միակազմ նախադասությունների՝ ժողովրդախոսակցական ակունքներից մեզ հասած լինելու օգտին.

Բարև՛ ու հազար բարև՛, Ոնց որ քունն զիս տանի՝
Արեգակ, իմ լոյս, իմ արև (111): Ամանաթ, որ այլ չի խօսիս (46):
Երկինք ու գետինք վկա՝ Նալէ՛ թ այն սիրուն վերայ.
Միրեր եմ ու չեմ մոռանար (74-75): Այս գիշեր կէսըս հալեցաւ (76):
Նայ ելաւ և կանչեց՝ «Շապա՛շ» (118):

Բայական միակազմ նախադասությունների համեմատությամբ հայրեններում անվանական միակազմ նախադասությունները նկատելիորեն սակավ կիրառություն ունեն:

Հայրենների մեջ տեղ են գտնել նաև ձայնարկությունների և վերաբերականների մասնակցությամբ ձևավորված միակազմ նախադասություններ, որոնցով նույնպես ապահովվում է խոսքի հուզականությունը.

- Երնէկ արևուս վրրայ, Շալլայ, թէ շուտով դառնայ,
Դու ի մեր դռնակըն չէ՛ս եկեր (65): Թէ՛ չէ իմ հոգեկս կելնէ (241):
Իրնիկ ինձ հազար բերան, Հասա, չհասա սիրուս,
Իմ եարն մնաց ինձ պալաշ (118): Վա՛յ հազար մօրս բերելոյն (318):
Աւա ղ ու հազար բերան, Աւա ղ գայն, որ շատ կու դատեր (409):
Թ՛ ի նչ խելօք ի՛ անխելացայ (82):

Հարկ է նշել, որ հայրեններում անհամեմատ սակավադեպ են բառ-նախադասությունները, որոնք նույնպես, ինչպես բայական անդեմ և անվանական միակազմ նախադասությունները, գեղարվեստական երկին հաղորդում են հուզական շունչ.

Քաւ ալ, թէ անցաւ աշխարհ (121):
Քաւ ել, թէ կարծիք ունիս
Աչերուս թ՝ այլ մարդ կու սիրէ (234):

Միակազմ նախադասությունները մեր լեզվամտածողության դրսևորումներից են և մեր լեզվի զարգացման յուրաքանչյուր ժամանակահատվածում ունեցել են իրենց դրսևորման զանազան միջոցներն ու ձևերը¹⁷: Դրանք ընդհանուր գծերով էապես տարբերվում են

¹⁷ Հայրենների ուսումնասիրությունն ի հայտ է բերում մի շարք հետաքրքիր իրողություններ: Այսպես, օրինակ, «Քունս տանում է» նախադասությունն իր տեսակի մեջ այսօր երկկազմ դիտելը կարող է կասկածի տեղիք տալ, մինչդեռ հայրեններում գտնում ենք բերված արտահայտության ամբողջական սկզբնաձևը.

Ասա՛ ու լսէ, իմ եար,
Ոնց որ չէ տարեր քունըն զիս (46):
Առանց քեզի ո՞նց ապրեմ,
Գամ իմ աչերս տանի քուն (228):

երկկազմ կառույցներից ոչ միայն արտահայտության ու բովանդակության պլաններով, այլև կիրառության սահմանափակությամբ: Խոսքային ամեն մի իրադրության մեջ չէ, որ կարելի է գործածել միակազմ նախադասություններ: Ավելին՝ հարկ եղած դեպքում գեղականցապես հնարավոր է խուսափել միակազմ նախադասություններից՝ դրանց փոխարեն գործածելով համարժեք երկկազմները:

Հայրենների ուսումնասիրությունից գալիս ենք հետևյալ եզրահանգման. որքան գեղարվեստական ստեղծագործության ակունքները մոտ են ժողովրդախոսակցական լեզվին, այնքան այդպիսի գործերում ավելի հաճախադեպ են միակազմ նախադասությունները: Բացառություն չեն նաև հայրենները, որոնցից շատերը ժողովրդական ստեղծագործություններ են: Միակազմ նախադասություններից հայրեններում առավել հաճախ հանդիպում են բայական, իսկ վերջիններիս շարքում էլ՝ դիմավոր միակազմ նախադասությունները: Բանն այն է՝ հայրեններում գեղականցապես նկարագրվում են մարդկային ամենատարբեր հարաբերություններ արտացոլող գործողություններ, որոնց կատարողների մասին խոսքի հեղինակը միշտ չէ, որ պատրաստ է որոշակիորեն նշելու, քանի որ՝ ա) կարևորում է կատարվող գործողությունը և բ) չգիտե, չի կամենում հայտնել կամ էլ չի կարևորում (և այլն) այդ գործողությունը կատարող(ներ)ի ով լինելը: Այդ է պատճառը, որ նման դեպքերում հեղինակը դիմում է խոնարհման համակարգի՝ դիմաթվային տեսանկյունից «ամենաթույլ օղակին»՝ հոգնակի թվի երրորդ դեմքին՝ գործողության կատարումը վերագրելով անորոշ անձանց: Շնորհիվ միակազմ նախադասությունների՝ հայրենների լեզուն դառնում է կենդանի ու սովորական, քանի որ փորձ է արվում խուսափել երկբաղադրիչ նախադասությունների միապադաղ շղթայից և կիրառել համառոտ, բայց ընթերցողին ավելի հոգեհարազատ հաղորդակցական միավորներ:

СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ОДНОСОСТАВНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В АЙРЕНАХ

ХАЧАТРИАН Г. К.

Резюме

Чем ближе истоки художественного произведения к народно-разговорному языку, тем чаще встречаются в них односоставные предложения. В этом ряду не являются исключением также айрены, в которых часто употребляются глагольные и номинативные односоставные предложения. Благодаря односоставным предложениям язык айренов обретает живость и простоту. При этом автор избегает употребления двусоставных предложений, используя краткие, но более доступные для читателя коммуникативные единицы.